

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏՆՐՄԻՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԱՅՄԱՆ ՓՆՆԱՐԱՆՈՒՄԸ*

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՀՍՍՀ ԳԼԽ քոլտնտեսական

Հայոց լեզվի տերմինաշինության դարգացման հարցերը միշտ էլ գտնվել են պետության տմենատարբեր բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Եվ այդ հասկանալի է: Ամեն մի գիտության ձեռք բերած նվաճումները, վերջի վերջու, արտահայտություն են գտնում նրա տերմինաբանության համակարգում: Գիտության դարգացման արդի վիթխարի առաջընթացը տերմինաբանական հարցերը սրում է ավելի, քան երբեք. բավական է ասել, որ աշխարհում գիտական ինֆորմացիան 10—15 տարվա ընթացքում կրկնապատկվում է: Առաջանում են գիտության բաղաձայնի նոր ճյուղեր և միջակա բնագավառներ: Ամեն մի լեզու, որ ուզում է մնալ արդի դարգացած լեզուների շարքում, հանգես դալ որպես գիտության լիարժեք լեզու, պետք է անընդհատ համալրվի, մշակվի, ճշգրտվի: Գիտական տերմինների կերտման, միօրինակացման և կայունացման հարցերը դառնում են հրատապ, գիտական տերմինաբանության բնագավառը՝ մշտական հոգածության ու խնամքի առարկա: Հայոց լեզվի տերմինաբանությունը չի կարող հեռու մնալ գիտության դարգացման բուռն ընթացքից. գալով դարերի խորքից՝ այն պետք է անընդհատ փոփոխվի և հարստանա՝ գիտական հասկացությունների փոփոխության և նոր հասկացությունների առաջացման պրոցեսին դուրընթաց:

Տերմինաբանական աշխատանքը կիրառական լեզվաբանության կարևորագույն բնագավառներից մեկն է: Այստեղ լեզվաբանությունը սերտ առնչության մեջ է մտնում բոլոր գիտությունների հետ, և նրանց մշտական համագործակցությունն անհրաժեշտ պայման է անընդհատ ծագող տեսական ու դործնական հարցերի լուծման համար: Եթե գիտության մյուս բնագավառների ներկայացուցիչները շահադրգոված են առաջին հերթին իրենց տերմինաբանության դարգացման հարցերով, ապա լեզվաբանը շահադրգոված է լեզվի դարգացման հարցերով ընդհանրապես, հոգ է տանում տարբեր բնագավառներում կատարվող տերմինաբանական աշխատանքը միասնականացնելու, տերմինաստեղծման սկզբունքները կայունացնելու և դրանց լայն կիրառություն հաղորդելու համար:

* Խմբագրության խնդրանքով ՀՍՍՀ ԴԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԴԱ թղթակից-անդամ Գ. Բ. Զահուկյանը սույն հոդվածում անդրադառնում է «Լրարերում. հայերենի տերմինաբանության հարցերի քննարկման առթիվ տպագրված մի շարք նյութերի մասին ամփոփող հոդվածում առաջ բաշվող խնդիրները, ինչպես նաև նախորդ հոդվածներում (տե՛ս «Լրարեր», 1969, № 7, 9, 1970, № 12, 1971, № 1, 2, 6, 7, 8) արծարծված սկզբունքային հարցերը, անշուշտ, կօգնեն արդի հայերենի առաջնահերթ ասպարեզներից մեկի՝ տերմինաբանության դարգացման հանդուգային հարցերի լուծմանը: Զահուկյանի ավելի մեծ տպագրված նյութերում, «Լրարեր» հատկապես և կանդրադառնա հայերենի տերմինաբանության հարցերին:

Տերմինաբանական հարցերը միշտ էլ առաջ են բերում կենդանի հետաքրքրություն և բուռն ռեակցիա: Այդ հարցերի լուծումը դժվարանում է նրանով, որ գիտական սկզբունքների կողքին ոչ պակաս դեր են խաղում ազգասիրական միտումները և անհատական հակումները: Վերջին դեպքում գիտական որոշակի սկզբունքի փոխարեն առաջնորդ է ընտրվում անհատական լեզվական ճաշակը. սկսում են դեր խաղալ անհատների լեզվական գիտելիքների և լեզվական դաստիարակության տարբերությունները: Մեծ գեր են խաղում նաև աշխատանքի բնույթն ու մասնագիտությունը. այսպես, հայտնի է, որ գիտնականը և թերթի թարգմանիչը գտնվում են միանգամայն տարբեր պայմաններում. առաջինը կարող է երկար ժամանակ խորհրդածել, խորհրդակցել, մի քանի անգամ փորձել, ընտրություն կատարել և նոր միայն լույս աշխարհ հանել տերմինը. երկրորդն ստիպված է անմիջապես գտնել այս կամ այն օտար տերմինի համարժեքը, եթե մանավանդ այն գրանցված չէ բառարաններում: Պարզ է, որ տերմինը նույնությամբ տառադարձելու կողմնակիցներն ամենից ավելի այս բնագավառում են:

Նկատի ունենալով հայերենի տերմինաշինության բնագավառում գոյություն ունեցող տարակարծությունները և տերմինաբանական հարցերի հրատապությունը՝ «Լրաբերի» խմբագրությունը նպատակահարմար համարեց բանավեճ սկսել հայոց լեզվի տերմինաբանության զարգացման սկզբունքների շուրջ: Բանավեճն սկսվեց Ռ. Ա. Իշխանյանի «Հայերենի տերմինաշինության հարցեր» հոդվածով («Լրաբեր», 1969, № 7), որի հեղինակը նպատակ էր զրել հերքել հայերենի տերմինաշինության մեջ այսպես կոչված «օտարաբան» ուղղության առաջ քաշած սկզբունքներն ու փաստարկները: «Լրաբերի» խմբագրությանն ուղղված իր նամակում («Լրաբեր», 1969, № 9) Ա. Մ. Ոսկանյանը նշում է, որ ճիշտ չէ իրեն «օտարաբան» ուղղության ներկայացուցիչ համարելը, որ ինքը հանդես է եկել տերմինաշինության ասպարեզում տեղ զտած ծայրահեղությունների դեմ, և որ Ռ. Իշխանյանի գիրքը կարելի է գնահատել որպես «մաքրամոլություն»: Կարելի է ասել, որ բանավեճի հետագա գրեթե բոլոր մասնակիցները խոսելով տերմինաբանության բնագավառում հանդես եկող երկու ծայրահեղության՝ «օտարաբանություն» և «մաքրամոլության» մասին՝ նշում են, որ առաջինը լեզուն զրկում է հասկանալիությունից և խանգարում նրա հաղորդակցական ֆունկցիայի իրականացմանը, հեշտացնում գրողի և զրժվարացնում ընթերցողի գործը, երկրորդը տանում է դեպի ազգային սահմանափակություն ու մեկուսացում: Բանավեճի հետագա մասնակիցները (է. Ադայան, Ա. Աբրահամյան, Ս. Աբրահամյան, Վ. Անդրեասյան, Հ. Բարսեղյան, Պ. Նազարյան, Ս. Ասլանյան, Գ. Մարտիրոսյան, Վ. Մանուկյան) իրենց հոդվածներում ու նամակներում ոչ միայն անկեղծորեն արտահայտում են իրենց վերաբերմունքը առաջ քաշված հակադիր տեսակետների նկատմամբ և շարադրում իրենց դավանած սկզբունքները, այլև առաջ են քաշում ու լուծում տեսական ու գործնական մի շարք կարևոր հարցեր: Կարելի է ասել, որ սրանով իսկ բանավեճը նպաստում է հայերենի տերմինաշինության հարցերի լուծմանը և տեղ զտած առանձին ծայրահեղությունների հաղթահարմանը:

Կանո առնենք բանավեճի ընթացքում առաջ քաշված մի քանի կարևոր հարցերի վրա:

1. Բանավեճի մասնակիցները, առանձնապես է. Ադայանը, նշում են, որ տերմինակերտման ժամանակ պետք է հաշվի առնել տերմինների համակար-

դային բնույթը, Զավոթ, տեսական և դործնական առումով խիստ կարևոր այս հարցը հետագա մեկնաբանություն չի ստանում: Մինչդեռ կարելի է ասել, որ տերմինակերտման դժվարությունները և տերմինաբանության սկզբունքների շուրջը տարվող վեճերը պայմանավորված են տերմինների ունեցած լուրահատուկ, կարելի է ասել՝ երկակի, բնույթով: Տերմինները, մի կողմից, որպես լրատու, մտնում են լեզվի ընդհանուր համակարգի մեջ և, հետևաբար, պայմանավորվում են տվյալ աղղային լեզվի պատմական դարգացման տեղեկներով ու առանձնահատկություններով: Նրանք, մյուս կողմից, մտնում են տերմինաբանության մասնակի համակարգի մեջ և պայմանավորվում են տվյալ բնագավառի հասկացությունների փոխադարձ կապով ու տվյալ շրջանում՝ այդ բնագավառի ընդգրկած դիտելիքների շրջանակով: Լեզվի համակարգը, որպես տվյալ աղղի անդամների հադորդակցման ընդհանուր միջոց, ձգտում է համադասարանություն: Տերմինային համակարգը, որպես տվյալ բնագավառի դիտելիքների ու հասկացությունների արտահայտություն, ձգտում է համամարդկայնություն: Այս դեպքում նախ՝ մեծ թիվ են կադմում փոխառությունները, երկրորդ՝ ներքին բառակերտումը մեծ մասամբ հենվում է արտաքին կադապարների (մոդելների) վրա, այսինքն՝ պատճենումը դառնում է բառակերտման հիմնական ուղին՝ հանդես գալով՝ այլևայլ միջոցներով, ըստ պատճենման բնօրինակների: Ամեն մի դիտություն ունի միջաղղային կամ միջաղղայնության ձգտող տերմինների մի որոշակի կարգ (նոմենկլատուրա), և, քանի որ ամեն մի անվանակարգ կադմվում է որոշակի սկզբունքներով, տերմինները կերտելիս դրանք պետք է հաշվի առնել: Միաժամանակ, քանի որ ամեն մի լեզվում արդեն առկա են տվյալ բնագավառի տերմինների մի որոշակի թիվ, չի կարելի հաշվի չառնել վերջիններս: Այլ կերպ ասած՝ պետք է որոշակի ներդաշնակություն ու միօրինակություն հաստատել արդեն առկա և կերտվող տերմինների միջև: Եթե նախապես եղած տերմինները լավ են արտահայտում դիտական հասկացությունները և մեծ թիվ են կադմում, ապա հարկ չկա նոր տերմիններ կերտելիս խախտել շարքը: Հասկանալի է, օրինակ, որ աստղա-ով սկսվող սովորական և բոլորին հասկանալի տերմինների (աստղաբաշխություն, աստղադիտություն, աստղագնացություն և այլն) կողքին աստղա-ով սկսվող տերմինների ներմուծումը (աստղաֆիզիկա և այլն) ակնհայտորեն աննպատակահարմար է, անմիօրինակություն է մտցնում և դժվարացնում տերմինների միասնական ընկալումը: Լինում է և հակառակը: Հետագայում պետք է լրջորեն մտածել այս կարգի տերմինների միօրինակացման մասին: Իհարկե, կարող են լինել և կան դեպքեր, որոնց համար չի կարելի միասնական դեդատումս տալ, ասել, թե ո՞ր դեպքում է դերադասելի աղղայինը, և ո՞ր դեպքում միջաղղայինը: Այսպիսի դեպքերում հարցը լուրաբանչուր տերմինի համար պետք է լուծել առանձին՝ չխախտելով ընդհանուր սկզբունքները:

2. Տերմինի համաղղայնության հարցի հետ սերտորեն կապվում է մի ուրիշ հարց, որ նույնպես առաջ է քաշվում բանավեճի մասնակիցների, հատկապես Ս. Աբրահամյանի կողմից: Եթե նախորդ կետում նշվեց տերմինի առնչությունը լեզվի ընդհանուր բառապաշարին և տերմինային համակարգին, այսինքն՝ տերմինի, որպես բառի, կապը մյուս բառերի ու տերմինների հետ, ապա այստեղ նկատի է առնվում տերմինի առնչությունը տվյալ լեզվի համակարգի մյուս կողմերին՝ նրա բառակադմական, ձևաբանական, և հնչյունական առանձնահատկություններին: Այլ կերպ ասած՝ այս կամ այն տերմինը ներ-

մուծելիս կամ ներքին միջոցներով կերտելիս պետք է հաշվի առնել բարդություններ և ածանցումներ տալու, հոլովվելու և խոնարհվելու նրա ընդունակությունը, այս դեպքերում նրա դյուրահաշնության և, սրա հետ կապված ու որոշ վերապահության, նրա կարծության աստիճանը: Այս նկատառումներով է, որ պետք է մերժել, օրինակ, ռացիոնալիզատորական, ռեկոլուցիոնականացնել, զրոսաշրջաբազա տիպի տերմինների գործածությունը: Եթե այդ չի արվում կազմակերպված ձևով, ապա լեզուն ինքը, որի մեջ գործում են տնտեսման և արտահայտչականության հակադիր տենդենցները, վերջ ի վերջո դրանք կարտամղի: Բանավեճի մասնակիցները խոսում են ոչ միայն փոխառությունների դեպքում հայոց լեզվի հնչյունական և ձևաբանական առանձնահատկությունները հաշվի առնելու, օտար տերմինները հայերենի մեջ «մերկլու», դրանք հայացնելու, ազգային ձևը հարգելու (Ա. Աբրահամյան, Հ. Բարսեղյան), այլև ներքին միջոցներով նոր բառեր կազմելու ժամանակ հայերենի բառակազմական առանձնահատկությունները նկատի ունենալու և ոչ ճիշտ կազմություններից խուսափելու մասին (է. Աղայան): Այսպես, հայտնի է, որ բայահիմքերի՝ որպես երկրորդ բաղադրիչ հանդես գալու դեպքում բաղդություններ չպետք է ունենան -ող, -իչ կազմիչները, այնինչ այս տիպի կազմությունները լայն տարածում են գտնում. հմմտ. փոշեծծիչ կամ փոշեֆաղիչ՝ փոխանակ փոշեծծուծ-ի կամ փոշեֆաղ-ի, հեռուստադիտող՝ փոխանակ հեռուստադեւտ-ի և այլն:

3. Բանավեճի մասնակիցները, հատկապես է. Աղայանը, Ա. Աբրահամյանը, Ս. Աբրահամյանը, տարբեր առիթներով դնում են լեզվի մեջ տերմինների պատմական ժառանգորդության հարցը: Լեզուն հաղորդակցման միջոց է, որ պետք է ապահովի ոչ միայն գոյակցող, այլև հաջորդող սերունդների հաղորդակցումը: Այս առումով անթույլատրելի է լայն գործածություն ունեցող և հիմնականում ճշգրիտ տերմինների փոխարինումը նոր համարժեքներով, ընդ որում այդ բանը հաճախ կատարվում է այն անձանց մեղքով, որոնք լավ ծանոթ չեն տվյալ բնագավառի հայերեն գրականությանը և տերմինաբանությանը: Սա վերաբերում է ինչպես հայկական կազմություններին, այնպես էլ փոխառություններին: Ի միջի այլոց նշինք, որ հաճախ վկայակոչվող ստուգաբանական նկատառումները ոչ միշտ են արդարացի, որովհետև այսպիսի մոտեցման դեպքում հարկ կլինի արմատական բարեփոխության ենթարկել բոլոր բնական (ոչ արհեստական) լեզուներն ընդհանրապես: Հայկական կազմություն ունեցող տերմինները անհարկի կերպով հայկական այլ կարգի կազմություններով փոխարինելու օրինակներ են բերում Ա. Աբրահամյանը (ստորեկրյա-ի փոխարեն ստորգետնյա, սպաս-ի փոխարեն քանապուր, ջերմոց-ի փոխարեն ջերմատուն), Ս. Աբրահամյանը (ռուս. ссорный-ի դիմաց նախկինում գործածվող հավաքական-ի փոխարեն բնութագրի): Փոխառյալ տերմինների անհաջող փոխարինման օրինակներ են բերում է. Աղայանը, Պ. Նազարյանը և ուրիշները (էվոլյուցիա-ի փոխարեն բնաշրջություն, կոմպոզիտոր-ի փոխարեն երգահան, տուրիստ-ի փոխարեն զրոսաշրջիկ և մանավանդ տուրիզմ-ի ու աուրբազա-ի փոխարեն զրոսաշրջություն ու զրոսաբազա կամ զրոսաշրջաբազա). նշենք, սակայն, որ Պ. Նազարյանը այս կարգի բառերի մեջ է մտցնում նաև այնպիսիները, որոնք արդի փուլում արդեն վկայել են իրենց գոյության իրավունքը և արմատավորվել: Բանավեճի բոլոր մասնակիցները անհանդուրժելի են համարում հատկապես արդեն լայն տարածում գտած և բոլորի համար հասկանալի բառերի ու տերմինների փոխարեն օտար բառերի ու տերմինների գործածու-

յնությունը. այսպես, Պ. Նազարյանն օրինակ է բերում կառուցաբերման լեզվի փոխարեն լուծման, մեթոդների փոխարեն ցիտել բառերի գործածությունը:

1. Հոգովածինությունը զգալի առիթ է տրվում հայ տերմինաբանության աղբյուրների, գրանց տեսակարար կշռի և տերմինակերտման պետական կանոնավորման հարցերին: Ս. Արքայանյանը տարբերում է ա) ներքին միջոցներ (բառաձանցում ու բառարարություն, բառակապակցություն, բառի վերամասնավորում, հապավում), բ) արտաքին միջոց (փոխառություն) և գ) երկու կարգի միջոցների միաժամանակյա օգտագործում: Ս. Արքայանյանը և Հ. Բարսեղյանը նշում են այս միջոցների օգտագործման հարցում ՀՍՍՀ Մինիստրների սովետին կից տերմինաբանական կոմիտեի որոշումներն անշեղորեն կենսադրվելու անհրաժեշտությունը: Տերմինաբանական կոմիտեն գրել է.

«1. Ուղղորդյալ դեպքերում, երբ հնարավոր է առանց տերմինի ռեալ իմաստի աղճատման կազմել նոր տերմիններ հայերենի բառակազմության մեթոդներով, չխուսափել այդպիսիները կազմելուց:

2. Առանց քաշվելու ընդունել և գործածել անհրաժեշտ միջազգային տերմինները, որոնց հայերեն համարժեքները չկան կամ չեն կարող կազմվել առանց իմաստի աղճատման»:

Իհարկե, տարաձայնություններ կարող են լինել այս որոշման մեկնաբանության հարցում: Վեճեր կարող են լինել, թե ո՞ր դեպքում մենք գործ ունենք իմաստի աղճատման հետ և ո՞ր դեպքում՝ ոչ, ինչպիսի՞ն պետք է լինի ներքին և արտաքին աղբյուրների տեսակարար կշիռը, ո՞ր աղբյուրի վրա պետք է շեշտը դնել: Բնականաբար այսպիսի դեպքերում է, որ հարցը պետք է որոշվի մեկ ընդհանուր օրգանի կողմից, ըստ հնարավորին նվազեցվի անհատական ճաշակի դերը: Սա պահանջում է տերմինաբանական կոմիտեի աշխատանքի աշխուժացում, անհրաժեշտ է դարձնում պարբերական բյուլետենների հրատարակումը՝ գործածվող տարբերակներով և առաջարկվող տերմինների ցանկերով: Տերմինները պետք է դասական ընդհանուր քննարկման առարկա և ամրադրվեն տերմինաբանական կոմիտեի որոշմամբ՝ այդ քննարկման արդյունքների հիման վրա: Բանավեճի մասնակիցներն առանձնապես նշում են տերմինաշինության բնագավառում հանդես եկող որոշ ինքնահոսն ու կամայականություններ, գնում անհատական տերմինակերտումները սահմանափակելու հարցը: Բերվում են փաստեր, երբ տարբեր անհատներ, երբեմն առանց համապատասխան լեզվական պատրաստականության և լեզվական ճաշակի, զբաղվում են տերմինակերտմամբ, հաշվի չեն առնում արդեն գոյություն ունեցող տերմինները, ողողում են հայերենը, կամայական բառակերտումներով: Հմտ. փոշեծուծ, փոշեծծիչ, փոշեճալ, փոշեճավալ, փոշեճաղ, փոշեճաղիչ:

Ըստ հնարավորին պետք է սահմանափակել անհատական, այլ մասնագետների հետ չհամաձայնեցված, ընդհանուր քննարկման չդրված և տերմինաբանական կոմիտեի կողմից չօրինականացված տերմինակերտումները, որոնք յժվարացնում են հայ գիտական գրականության ընկալումը: Քիչ չեն դեպքեր, երբ ընթերցողն ստիպված է թարգմանության աղբյուրի օգնությամբ վերծանել նորակերտ տերմինի արժեքը: Այս կապակցությամբ հարց է բարձրացվում ուսումնասիրելու առանձին բնագավառների և գիտաճյուղերի տերմինաբանությունը (է. Աղայան): Այսպիսի ուսումնասիրությունը հնարավորություն կտա պար-

1 Ս. Ղազարյան, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945, էջ 9:

զելու տվյալ բնագավառի տերմինների ներքին և արտաքին հարաբերությունը միասնականացնելու սկզբունքները և հեշտացնելու եղած թարբերականներից կատարվող ընտրությունը:

5. Բանավեճի մասնակիցները հաճախ են անդրադառնում այսպես կոչված միջազգային տերմինների հարցին: Տերմինների լայն փոխառության կողմնակիցները, բնականաբար, գտնում են, որ միջազգային տերմինների թարգմանությունը նպատակահարմար չէ: Հակառակ տեսակետի կողմնակիցների կարծիքով տերմինի միջազգայնության փաստարկին չպեսք է վճռական նշանակություն տալ, և որ նախորդ տեսակետի կողմնակիցների կողմից միջազգային հայտարարված շատ տերմիններ իրականում միջազգային չեն: Ռ. Իշխանյանը, բերելով բառերի մի մեծ ցանկ (1969, № 7, էջ 90), նշում է, որ «չկա այդ բառերի մեջ գեթ մեկը, որ գործածական լիներ մեր ստուգած բոլոր լեզուների մեջ»:

Տեսական գրականության մեջ տերմինի «միջազգայնության» չափանիշների հարցը իրոք վեճերի տեղիք է տալիս, և մատնանշվում է այդ տերմինի որոշ պայմանականությունը: Բոլոր լեզուների համար ընդհանուր, բացարձակ միջազգային բառեր գրեթե չկան: Այս դեպքում՝ ա) բնականաբար պետք է նկատի առնել գիտական տվյալ տերմինի մեխիմաստ գործածականությունը գիտական գրականության հիմնական լեզուներում. նպատակահարմար չէ այսպիսի տերմինների չհիմնավորված թարգմանությունը, որ, միաժամանակ, դժվարություն է հարուցում տվյալ ճյուղով զբաղվող մասնագետի առջև այլալեզու գրականության անցնելիս և խախտում գիտության տվյալ ճյուղի համակարգայնությունը: Բ) չի կարելի թարգմանել գրեթե բոլոր ժողովուրդների մոտ տարածված, այդ ժողովուրդների կյանքն ու կենցաղն արտացոլող բառերը (ոուրի, կոպեկ, խաբչո, սաֆիլի, պուրի, կեֆիր, կաբակուլ, դուր, վիսկի, խալակիրի, բայան, կոբզար, աուլ, խուտուր և այլն) (Ա. Աբրահամյան, Ս. Ասլանյան): Գ) թարգմանության ընթացիկ չեն հատուկ անուններից կաղմված, ինչպես նաև քիմիայի ու համատիպ այլ բնագավառների անվանակարգային (նոմենկլատուրային) տերմինները (Հ. Բարսեղյան):

Այս բոլորի հիման վրա կարելի է նշել տերմինաբանական աշխատանքի աշխուժացման հետևյալ առաջնահերթ միջոցառումները.

1. Տերմինաբանական կոմիտեի աշխատանքի աշխուժացում, տերմինաբանական բյուլետենի հրատարակում, մշտական հսկողություն տերմինաբանական աշխատանքի վրա:
2. Տերմինաբանական բառարանների կազմման աշխատանքի բարելավում:
3. Առանձին մասնաճյուղերի տերմինաբանության ուսումնասիրություն:
4. Տերմինաբանության տեսություն, խոսքի մշակույթի և բառագիտության հարցերի ավելի աշխուժացված ուսումնասիրություն:
5. Տարբեր հիմնարկների փաստաթղթերի լեզվի վրա հսկողության սահմանում՝ համապատասխան գերատեսչությունների միջոցով:
6. Լեզվաբանների և այլ մասնագետների համագործակցություն:
7. Տերմինաբանության գծով կադրերի պատրաստում: ինչպես տարբեր գիտությունների, այնպես էլ լեզվաբանության գծով:
8. Տերմինաբանական աշխատանքի օգակների, «Հայկական հանրագիտարանի» խմբագրության, գիտական ինֆորմացիայի ինստիտուտի սերտ համագործակցություն: